Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2021թ. հուլիսի 27-29-ը Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Նարեկ Տերյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Իրանի Իսլամական Հանրապետություն, ք. Թեհրան, 2021թ. հուլիսի 27-29-ը

4. Հրավիրող կողմը՝

ԻԻՀ «Սոցիալական ապահովության ներդրումային ընկերություն» (SHASTA)

5. Գործուղման նպատակը՝

ԻԻՀ «Սոցիալական ապահովության ներդրումային ընկերության» հետ Հայաստանում համատեղ ներդրումային ծրագրերի իրականացմանն առնչվող հարցերի քննարկում

6. Քննարկված թեմաները՝

- ԻԻՀ «Սոցիալական ապահովության ներդրումային ընկերության» ենթակայության տակ գտնվող ընկերությունների (ներառում է 11 հոլդինգ) մասնակցությամբ ՀՀ տնտեսության մի շարք ոլորտներում ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորությունների քննարկում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում «Darou Pakhsh Pharmaceutical MFG. CO.» ընկերության գործադիր տնօրեն և խորհրդի անդամ Մոհամմադ Նադերի Ալիզադեհի և «Darou Pakhsh Pharma. Chem. Co.» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Սեյիդ Կուչեկիի հետ: Հանդիպման ժամանակ քննարկել են երկու երկրների միջև դեղագործական ոլորտում փորձի փոխանակման մեխանիզմները, Հայաստանում դեղերի և դեղանյութերի արտադրություն հիմնելու համար պատշաճ արտադրական գործունեություն ծավալելու հետ կապված հարցերը:

Արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն իրանական կողմի հետ համատեղ միջոցներ ձեռնարկել ՀՀ տարածքում ժամանակակից տեխնոլոգիաներով զինված դեղագործական խոշոր արտադրամաս հիմնելու ուղղությամբ:

Այցի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում «Tamin Pharmaceutical Investment Company» կազմակերպության (TPICO) գործադիր տնօրեն և խորհրդի անդամ Պույա Ֆարհաթի ու TPICO-ի ռազմավարական ծրագրավորման և զարգացման հարցերով տնօրեն Ալի Էրամի հետ: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են իրանական կողմից դեղագործական ոլորտում վարվող ներդրումային քաղաքականության ռազմավարության հիմնական ուղղությունների և դրանց իրագործման մեխանիզմների հետ կապված հարցերին: Քննարկման արդյունքում ԻԻՀ ընկերության ղեկավարությունն իր պատրաստակամությունն է հայտնել ՀՀ դեղագործական ոլորտում ներդրումներ կատարելու՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման միջոցով:

Բացի այդ, ացի ընթացքում կազմակերպվել են մի շարք այցելություններ իրանական դեղագործական ընկերություններ և արտադրամասեր: Շրջայցերի ժամանակ ներկայացվել է՝ ԻԻՀ պոտենցիալ գործընկերների կողմից կիրառվող տեխնոլոգիական գործընթացները, ինժեներական համակարգերը, արտադրանքի որակն ապահովող ժամանակակից լուծումները: Ընկերությունների ղեկավարների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն դեղագործական ոլորտում փոխշահավետ համագործակցություն հաստատելու մասին:

«Farab International Export Management Co.» ընկերության գործադիր տնօրեն Ալի Ակբր Ռեզաեիի և համանուն ընկերության տնտեսական և բիզնեսի գործերով փոխտնօրեն Աֆշար Ֆաթհոլլահիի հետ հանդիպման շրջանակներում քննարկվել է նավթամշակման ոլորտում երկու երկրների միջև առկա ներուժը, և պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ աշխատանքներ տանել ՀՀ Սյունիքի մարզում նավթազտարանի հիմնման ուղղությամբ: Իրանական կողմը նաև իր հետաքրքրությունն է հայտնել Հայաստանի ճանապարհաշինարարության և հանքաարդյունաբերության ոլորտներում ակտիվ գործունեություն ծավալելու մասին:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

30.07.2021թ.

7/30/2021

X

ԱՐՏՅՈՄԻ ՆԱՐԵԿ

Signed by: TERYAN NAREK 2103870832